Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.151

The Armenian Diaspora: Formation in the 1920s

Lusine Moskovyan
https://orcid.org/0009-0002-0180-2104
YSU, Master of Armenian Studies
lusine.moskovyan.v@mail.ru

Keywords*:* Armenian Genocide, Armenianness, Diaspora, community, Spiritual Armenia, Simon Vratsyan, Garegin Nzhdeh, Middle East, USA.

The article examines the situation following the Armenian Genocide, when a significant portion of the Armenian population was displaced beyond the borders of their homeland. It presents the ideology of "Spiritual Armenia", developed by the figures of the Dashnaktsutyun party, as a foundational framework for the consolidation of the Armenian Diaspora. The article also clarifies and analyzes the term "diaspora," evaluating historians' perspectives on its evolution within the Armenian context.Additionally, the article provides a comprehensive overview of the distribution and demographic characteristics of the Armenian Diaspora during its formative period in the 1920s.

Հայկական սփյուռքը ձևավորման գործընթացը 1920-ական թվականներին

Լուսինե Մոսկովյան
ԵՊՀ, Հայագիտության մագիստրոս

Հիմնաբառեր*:* Հայոց ցեղասպանություն, հայություն, սփյուռք, համայնք, Հոգևոր Հայաստան, Սիմոն Վրացյան, Գարեգին Նժդեհ, Մերձավոր Արևելք, ԱՄՆ:

Հոդվածում քննարկվում է Հայոց ցեղասպանությունից հետո ստեղծված իրավիճակը, երբ հայության մի ստվար հատվածը հաստատվել էր հայրենիքի սահմաններից դուրս: Ներկայացվում է դաշնակցական գործիչների «Հոգևոր Հայաստան» գաղափարախոսությունը՝ որպես սփյուռքի համախմբման գաղափարական հենք: Ներկայացվում և վերլուծվում է «սփյուռք» եզրույթը հայերենում, ինչպես նաև պատմագիտական տեսակետները հայ իրականությունում դրա

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 151-162

Received: 12.06.2025
Revised: 11.08.2025
Accepted: 17.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

կիրառման վերաբերյալ: Հոդվածը համակողմանիորեն անդրադառնում է նաև ձևավորման փուլում՝ 1920-ականներին, հայկական սփյուռքի տեղաբաշխվածության և թվաքանակի ընդհանուր պատկերին:

Армянская диаспора: формирование в 1920-е годы

Лусине Московян

ЕГУ, Магистр арменоведения

Ключевые слова: Геноцид армян, армянство, диаспора, община, Духовная Армения, Симон Врацян, Гарегин Нжде, Ближний Восток, США.

В статье рассматривается ситуация, сложившаяся после Геноцида армян, когда значительная часть армян поселилась за пределами родины. Идеология партии «Дашнакцутюн» «Духовная Армения» представлена как идеологическая основа для консолидации диаспоры. Представлен ипроанализирован термин «диаспора» на армянском языке, а также исторические взгляды на его применение в армянской действительности. В статье также всесторонне рассматривается общая картина распределения и численности армянской диаспоры в период её формирования, в 1920-е годы.

* * *

Ներածություն: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության իշխանությունները ձգտում էին վերջնականապես ճնշել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և վերջտալՀայկական հարցի լուծմանն ուղղված միջազգային դիվանագիտության ջանքերին:Այդ նպատակով նրանց կողմից 1915 թվականին Արևմտյան Հայաստանում, Կիլիկայում և այլ վայրերում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության և բռնագաղթի քաղաքականության արդյունքում սպանվեց շուրջ 1,5 միլիոն հայ: Պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո բռնագաղթը վերապրած հայությունը սկսեց վերադառնալ հայրենիք, նախ և առաջ՝ ազատագրված Կիլիկիա: Սակայն,երբ 1921 թ. վերջինՖրանսիան, դուրս հանելով իր զորքերը Կիլիկիայից, հանձնեց այն Թուրքիային, հայերը հարկադրված եղան վերջնականապես հեռանալ այնտեղից:

Հայոց ցեղասպանությունից հետո, հայ գաղթականները, զրկվելով հայրենիքում ապրելու հնարավորությունից, սփռվեցին աշխարհի տարբեր երկրներում՝ համալրելով արդեն իսկ գոյություն ունեցող գաղթօջախները կամ ստեղծելով նորերը: Հայ ժողովրդի կողմից կատարվածի ճակատագրական նշանակության գիտակցման արտահայտություններից է գաղթաշխարհի՝ այդ որակապես նոր տեսակի բնութագրումը «սփյուռք» հասկացությամբ, որը հայերենում մինչ այդ չէր կիրառվել սեփական պատմության և տարբեր երկրներում գոյություն ունեցող հայ համայնքների նկատմամբ: 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվեցին, որը

պատճառ հանդիսացավ Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարության և ավանդական կուսակցությունների Սփյուռքում հաստատմանը [Եղիազարյան, 2014, 33-39]:

1920-ական թթ. Սփյուռքում գործող երեք ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ) մեծ դեր ունեցան հայկական սփյուռքում համայնքային կյանքիկազմակերման, համախմբման և ինքնության պահպանման հարցում:

Հայկական սփյուռքի ձևավորումը բարդ և բազմաշերտ գործընթաց է, որը պայմանավորված է տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործոններով: Սույն հոդվածում փորձ է արվել ամփոփ և համակարգված ներկայացնել այդ գործընթացի որոշ կարևոր բաղադրիչներ՝ հենվելով թեմայի վերաբերյալ գիտական գրականության և այս ժամանակշրջանի սփյուռքյան մամուլի վրա: Թեև թեման բազմիցս ուսումնասիրվել է տարբեր հեղինակների կողմից, սակայն սույն աշխատանքը առանձնանում է նյութի համադրական ներկայացմամբ և հեղինակային դիտարկումներով, որոնք նպատակ ունեն ամբողջական պատկեր ձևավորել հայկական սփյուռքի ծագման և 1920-ական թթ. հայկական համայնքների ձևավորման մասին:

Հայկական սփյուռքի առաջացման գործընթացը: Հայ ժողովրդի այն հատվածը, որը երկար ժամանակ հեծում էր թուրքական վայրագ տիրապետության տակ, 19-րդ դարի վերջին քառորդից սկսած պարբերաբար ենթարկվում էր բնաջնջման ու իր բնօրրանից արտաքսման: Դա ուղղակի հարցականի տակ էր դնում նրա ֆիզիկական գոյությունը: Աբդուլ համիդյան արյունոտ ռեժիմին փոխարինած երիտթուրքական կառավարությունը ոչ մի դրական քայլ չկատարեց ազգային հարցում և Օսմանյան կայսրության կողմից նվաճված ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, շարունակում էին ենթարկվել ճնշման, հալածանքների և գաղթի:

Այն, ինչ տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ, իր չափերով ու վայրագություններով միանգամայն բացառիկ ու աննախադեպ երևույթ էր ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ: Դա փաստացիորեն 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր (գենոցիդ), որն իրականացվեց ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքի առաջ:

Հայոց պատմության առանձնահատկություններից մեկը հայ ժողովրդի մի հատվածի՝ իր էթնիկական տարածքից՝ հայրենիքից դուրս բնակվելն է: Նրա աշխարհասփյուռ գոյությունը ուղիղ հետևանք է ցեղասպանության: Ցեղասպանությունից առաջ էլ աշխարհի բազմաթիվ երկրներում գոյություն ունեցել են հայկական ծաղկուն գաղթօջախներ [Եղիազարյան, 2013, 26], որտեղ դարեր շարունակ պահպանվել են հայ ինքնության այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են՝ լեզուն, հավատը, մշակույթը, ընտանիքը [Дятлов, Мелконян, 2009, 36, Պողոսյան, 2020, 34]:

Ցեղասպանության արդյունքում հայությունը ոչ միայն կորցրեց իր պատմական հայրենիքը, այլև՝ հետագայում այնտեղ վերադառնալու իրավունքը, սփռվեց աշխարհով մեկ: Այդ ժամանակներից գաղթաշխարհը սկսեց կերպափոխվել (տրանսֆորմացվել)՝ գաղթավայրային իրականությունից անցում կատարելով դեպի աշխարհայացքային և կազմակերպական առումներով որակապես տարբերվող նոր մակարդակ՝ «սփյուռքյան ձևաչափ» և, աստիճանաբար, հայրենիքից դուրս ապրող հայերի համար սկսեց գործածվել «սփյուռք» եզրը [Եղիազարյան, 2014, 33,Մելիքսեթյան, 1985, 3,Պողոսյան, 2020, 38, Աբրահամյան, 1964, 3]: Մինչ ցեղասպանությունը «սփյուռք» եզրը հայ իրականությունում չէր կիրառվել՝ սեփական պատմության, տարբեր

երկրներում գոյություն ունեցող հայ համայնքների նկատմամբ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 9]:

Ժամանակակից հայկական սփյուռքի ձևավորման հարցում Ցեղասպանության էական ազդեցությունը հաշվի առնելով՝ սփյուռքիհայտնի տեսաբանՌ. Քոհենը Հայկական սփյուռքը դասակարգել է «զոհ» սփյուռքների խմբում [Cohen, 2008, Վարդանյան, 2020, 203, Թորոսյան, Վարդանյան, 2018, 22]:

Հայկական սփյուռքը հրեական և հունական սփյուռների հետ միասին համարվում է աշխարում հնագույն սփյուռքներից մեկը, թեև հայերենում և հայ պատմագիտության մեջ նախաեղեռնյան շրջանի սփռված հայության համար՝ որպես հավաքականության, կիրառվում է գաղթաշխարհ բառը: Սփյուռքը diaspora-ի համարժեքն է: Գաղթաշխարհի գաղութ արմատը բնիկ սեմական բառ է, որի պարզ արմատն է gala՝ «բնակիչներին վտարելով երկիրը դատարկել» իմաստով (եբրայերեն՝ galut «աքսորի տարվելը, աքսորականներ, գաղթականներ»): Ժամանակակից եբրայերենում diaspora-ն հենց հրեական սփյուռք իմաստով արտահայտվում է galut բառով, որում ակնհայտորեն առկա է բացասական երանգը՝ «արտաքսում» [Վարդանյան, 2016, 124-125]: Հայերի մոտ *գաղթավայր* տերմինում ակնհայտորեն առկա իմաստային շերտը՝ կապված *աքսոր*-ի հետ, այսօր բավականաչափ չեզոք ձևով ընկալվում է միարմատ *գաղութ* բառում [Աբրահամյան, 2006, 39]:

Առհասարակ, հայրենիքից, բնօրրանից հեռանալու և այլ վայրերում բնակություն հաստատելու երևույթը՝ կամավոր կամ բռնի, և դրան սերտորեն կապված իրողությունները հայերենում ի հայտ են բերում բառերի ընդարձակ մի շարք՝ *գաղութ, համայնք, գաղթաշխարհ, սփյուռք, ցրոնք, աքսոր, պանդուխտ, դարիբ, նժդեհ, տարագիր, տարաբնակ, վտարանդի, փախստական, աստանդական, գաղութաբնակ, դրսեցի* և այլն (Վարդանյան, 2016, 124), ինչն, անշուշտ, հայոց պատմությանը բնորոշ իրողությունների լեզվական արտացոլումն է:

Պատմաբան Հ.Մելիքսեթյանը, փորձելով ճշգրտում կատարել գաղութահայ և սփյուռքահայ հասկացությունների հարցում, որոնք հավասարապես գործածվում էին հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքների վերաբերյալ, նշում է. «*Այդ հին և նոր հայկական համայնքներն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց ծագումով, այլև հայ իրականության մեջ ունեցած դերով ու բնույթով: Ուստի, տարաշխարհի ներկա համայնքների համար, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է գործածել սփյուռքահայ բառը: Հայկական նախկին գաղութներն առաջացել և գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ դեռ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունն ապրում էր իր հայրենիքում: Մինչդեռ ժամանակակից հայկական սփյուռքը ձևավորվեց թուրքական կառավարության կազմակերպած գենոցիդի հետևանքով, արևմտահայության զանգվածային տեղահանությունից հետո, երբ հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մեծ մասն ուղղակի հայազրկվեց*» [Մելիքսեթյան, 1985, 49, Վարդանյան, 2016, 126]: Ի դեպ, հայկական իրականության մեջ *սփյուռքի*՝ որպես ինքնաբնութագրող բառի առաջին կիրառություններից է Երվանդ Օտյանի վեպի խորագրում հունական տարբերակը՝ «Հայ Տիասբորան» [Վարդանյան, 2016, 126]:

Հ. Մելիքսեթյանը կարծում է, որ Սփյուռքը սկսել է կազմավորվել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ հարյուր հազարավոր հայեր հայտնվել են հին գաղթավայրերում և վերջնականապես ձևավորվել 1920-ական թթ., և հայկական իրականության մեջ շրջանառության

մեջ է դրվել «Ցրոնք» կամ «Սփյուռք» տերմինը: Ընդ որում, նա ընդգծում է, որ Սփյուռքի կազմավորումը տեղի է ունեցել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը զուգահեռ: Այդ ժամանակ սփյուռքահայության թվաքանակը հասնում էր շուրջ մեկ միլիոնի: Կ. Դալլաքյանը գաղթաշխարհի «սփյուռքացման» գործընթացն ընդլայնում է Լոզանի խորհրդաժողովից (1923 թ.) մինչև 1931-1932 թթ. Ընկած ժամանակահատվածը, երբ գաղթական հայությունը հիմնավորվեց տարբեր երկրներում, «թարմացրեց» գոյություն ունեցող ու մարող գաղթավայրերը և ձևավորեց ազգային հավաքական կեցություն՝ ընդհանրական Սփյուռք անվանումով [Դալլաքյան, 2004, 75]: Ըստ Էդ. Մելքոնյանի՝ հայ իրականության մեջ «Սփյուռք» հասկացությունը ծնունդ է առել 1920-ական թվականներին, երբ Հայոց ցեղասպանությունից փրկված հարյուր հազարավոր հայերը, զրկված հայրենիք վերադառնալու հնարավորությունից, ցրվեցին աշխարհում և գիտակցելով կատարվածի ճակատագրական նշակությունը, գաղթաշխարհն իր՝ որակապես այդ նոր փուլում, սկսեցին անվանել Սփյուռք [Дятлов, Мелконян, 2009, 42-43]: Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք նշել, որ Սփյուռքի աստիճանական ձևավորումը տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունից հետո, և 1920-ական թթ. Հայկական իրականության մեջ հայտնվել է նաև «Սփյուռք» հասկացությունը [Եղիազարյան և ուրիշներ, 2017, 11-12]:

Առհասարակ, աշխարհում սփյուռքները ձևավորվում են գաղթի, աքսորի, կրթական, մշակութային, աշխատանքային միգրացիայի, քաղաքական վտանգավոր իրավիճակներից խուսափելու և բազմաթիվ այլ գործոնների հետևանքով: Հավաքական ինքնագիտակցության, պատմական հիշողության, հայրենիքի հետ զգացական կապի պահպանմամբ այն համախմբվում էանհատների, կառույցների և հաստատությունների լուրջ դերակատարության շնորհիվ [Հակոբյան, 2016, 7]: Այս առումով հատկանշական է, որ հայկական սփյուռքի ձևավորման շրջանում՝ 1921թ. սփյուռքում էին հաստատվել Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները: Փաստորեն, գաղթավայրերում էին քաղաքական գործիչներ, պետության նախկին ղեկավարներ, անձինք, որոնք կանգնած էին եղել 1890-ական թթ. սկիզբ առած հայ ազատագրական շարժման ակունքներում, անցել էին այդ շարժման ողջ ընթացքը, կազմակերպել հայության տարբեր հատվածների ինքնապաշտպանությունը Ցեղասպանության ժամանակ, պայքարել անկախ պետականության ստեղծման համար, հիմնադրել Հայաստանի Առաջին Հանրապետությունը, անցել իշխանության և կազմավորել պետական կառույցներ: Եվ անշուշտ, Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը հաստատվելով Սփյուռքում՝ ակտիվորեն շարունակեց իրգործունեությունըհայությանըհամախմբելուտեսլականով: Այս կապակցությամբ Ս. Վրացյանը գրում էր Ամենայն Հայոց կաթողիկոսին. «*Կազմակերպելով և բարեշինելով հանդերձ իր ներքին կյանքը, Հայ Սփյուռքը չմոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»: Հոգևոր Հայաստանը չփորձեց իրեն հակադրելու Սովետական Հայաստանին, թեև վերջինս ուրացավ և դավադրեց նրա դեմ»: Ակնհայտ է, որ աշխարհասփյուռ հայության հոգևոր հավաքականությունը սկսել էր կոչվել «Հոգևոր Հայաստան»:*

Գ. Նժդեհը գրում էր. *«Կա՛ հայությունը հոգեբանորեն կենտրոնացնելու, նրան իբրև հասարակություն կերպավորելու մի գործոն-Հայհեդ. դաշնակցությունը»:* Մեծ հայորդին այնուհետև շարունակում էր. *«Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա (իմա՛ սփյուռքահայությունը) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք: ...Հայաստանից դուրս,*

օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը:... Այսօր, մխիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցե՛ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»: Ընդհանրապես, նա մշակել էր *«Երբե՛ք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»* կարգախոսը [Եղիազարյան և ուրիշներ, 2017, 17-18]:

Այսինքն՝ ըստ Ս.Վրացյանի և Գ.Նժդեհի, ՀՅԴ-ն աշխարհում ցրված հայությանը որպես մեկ հավաքականություն (հասարակություն) ձևավորելու փորձ էր կատարում, որը իրականացվում էր ինչպես առանձին գաղթօջախներում՝ դրանք վերածելով կազմակերպված համայնքների, այնպես էլ համաստիյուռքյան սահմաններում: Սակայն հայության «հոգևոր» հավաքականությունը չէր ունենալու գծված սահմաններ, այն ունենալու էր համաստիյուռքյան ընդգրկում: Կար Հայաստանի խորհրդային Հանրապետություն, որն անկախ չէր: Այն քաղաքական դրդապատճառներով հատվածական կապեր ուներ Սփյուռքի հետ: Միևնույն ժամանակ կար աշխարհում սփռված հայություն և ի դեմս հայկական կուսակցության ղեկավարության՝ կար նաև հայության տարբեր հատվածների քաղաքական ղեկավարություն: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից, ապրել առանց նրա, այն օտար հողում փորձ էր կատարում ստեղծելու «Հոգևոր Հայաստան», մի իրականություն, երբ աշխարհաստիյուռ հայությունը ղեկավարվում, ուղղորդվում է, երբ ստեղծվում են նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ: «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման համար նախ և առաջ հիմք էր ընդունվում ՀՅԴ կազմակերպական կառույցը: Առաջին հերթին շեշտը դրվում էր ՀՅԴ տարածքային, տեղական կառույցների վրա, որոնք տարբեր համայնքներում ձեռք էին բերում նաև համայնքային ղեկավարության գործառույթներ: Ա.Սահակյանը, նկարագրելով 1920-ական թթ. Մերձավոր Արևելքի գաղթավայրերում ՀՅԴ իրականացրած գործունեությունը, մասնավորապես ընդգծում է. *«…ընկերները թափով նվիրվեցան աշխատանքի: Որքան արագ գլուխ գար մեր կոմիտեներու կազմությունը, և որքան ուժեղ ըլլային անոնք, այնքան դյուրին պիտի ըլլար ընդհանուր համակարգություն մտցնել ժողովուրդին մեջ»* [Եղիազարյան և ուրիշներ, 2017, 18-19]:

«Հոգևոր Հայաստան»-ի գաղափարախոսների (Ս.Վրացյան, Գ.Նժդեհ, Ն.Աղբալյան, Լ.Շանթ և այլք) ջանքերով Սփյուռքում աստիճանաբար ի հայտ են գալիս մշակութային, կրթական, կանանց, երիտասարդական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ, միություններ և հաստատություններ, իսկ արդեն իսկ գոյություն ունեցող նմանատիպ կազմակերպություններն ու միություններն ավելի են ընդարձակում իրենց գործունեությունը: Նմանատիպ կառույցների գործունեությունը ուներ մի քանի տարածական շրջանակ: Այն երբեմն ընդգրկում էր որևէ առանձին վերցրած համայնք, երբեմն ունենում տարածաշրջանային, իսկ երբեմն էլ՝ համաստիյուռքյան տարածքում: Երիտասարդ սերնդի շրջանում սկսում է տարածվել նաև ազգայնական դաստիարակություն: Վերջինիս համատեքստում Սփյուռքի երիտասարդության համար ստեղծվում են «Ցեղակրոն ուխտեր» [Բարսեղյան, 2009, 21-23]: «Հոգևոր Հայաստան»-ի ձևավորման գործընթացն ավարտվեց քաղաքական կառույցի հիմնադրմամբ, որը սկզբում կոչվում էր «Հայաստանի Հանրապետության պատվիրակություն», որը շարունակում էր 1920-ական թթ. սկզբին գոյություն ունեցող Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակության գործունեությունը, իսկ այնուհետև վերանվանվեց «ՀՅԴ Հայ դատի հանձնախումբ»՝ Ս.Վրացյանի

գլխավորությամբ: Հանձնախմբի գործունեությունը նպատակաուղղված էր հայկական պահանջատիրության արծարծմանը տարբեր երկրներում և կազմակերպություններում: Դրանով իսկ աշխարհասփյուռ հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը, ճիշտ է, ուներ սահմանափակ (գրեթե միայն պահանջատիրության) բնույթ, սակայն, միննույն ժամանակ, համահայկական շահի ընդգրկում: Այդ պատճառով «Հայ Դատ» հասկացությունը շուտով ձեռք բերեց համասփյուռքյան, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո նաև՝ համահայկական տարածում [Եղիազարյան և ուրիշներ, 2017, 19-20]:

«Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման գործընթացը պատմական անհրաժեշտություն էր և անխուսափելիորեն ստեղծվելու էր սեփական հայրենիքից հարկադրաբար կտրված ապրելու պայմաններում: Սակայն յուրաքանչյուր, թեկուզ անխուսափելի գործընթաց ունենում է առաջնորդներ: Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարներն էին այն առաջնորդները, որոնք ներմուծեցին «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը և իրենց գործունեությամբ իրականություն դարձրին այն: Պատահական չէ, որ Խորհրդային Հայաստանի հետ կապերի խզումից հետո համանման միավորիչ աշխատանքներով սկսեցին զբաղվել նաև Սոցիալ դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական կուսակցությունները և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Նրանց ջանքերով ստեղծվում են մշակութային, երիտասարդական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ ու հաստատություններ: «Հոգևոր Հայաստան» հասկացությունը, որը իրենից ընդհանուր առմամբ ներկայացնում էր աշխարհասփյուռ ազգի հոգևոր հավաքականություն, անկասկած, ամբողջացվեց մյուս կուսակցությունների և կազմակերպությունների՝ համանման նպատակներ հետապնդող գործունեությամբ: Միմյանցից առանձին՝ նրանք ավարտին էին հասցնում աշխարհասփյուռ ազգի համախմբման գործընթացը [Եղիազարյան և ուրիշներ, 2017, 20]: «Հոգևոր Հայաստան» կոչվող համակեցական համակարգի նպատակը համասփյուռքյան կազմակերպությունների և համայնքային կառույցների միջոցով հայության համար ներազգային կենսագործունեության դաշտի ձևավորումն էր [Եղիազարյան, 2011, 41-52]: Ամփոփելով կարող ենք նշել, որ սփռված էթնիկ խմբից կազմակերպված սփյուռք ձևավորելու գործընթացը հայկական սփյուռքի պարագայում գափարական առումով զգալիորեն առնչվում է «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարին:

Հայկական սփյուռքի տեղաբաշխվածությունը 1920-ական թթ.: 1920-ական թթ. սկզբի տվյալներով հայ բնակչության թվով ամենամեծը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներն էին: Այստեղ ապաստան էին գտել շուրջ 150 հազար հայեր, որից մոտ 90 հազարը՝ Հալեպում և նրա շրջակայքում, 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկոսում, իսկ մնացածները ցրված էին այլ բնակավայրերում: Մի կողմից հայության այդ հոծ զանգվածի առկայությունը, իսկ մյուս կողմից արաբ բնակչության հյուրընկալ վերաբերմունքի շնորհիվ ստեղծված նպաստավոր պայմանները Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթավայրերը դարձրին Սփյուռքի կարևոր օջախներ [Տագէսեան, 2018, 26]: Հենց այն ժամանակվանից Հալեպն ու Բեյրութը դարձան Մերձավոր Արևելքի հայության նշանավոր կենտրոններ՝ իրենց հայկական վարժարանների լայն ցանցով, մտավորական կարող ուժերով, պարբերական մամուլով, կուսակցական, մշակութային, մարզական միություններով ու ակումբներով [Մելիքսեթյան, 1985, 50]:

1920-ական թթ. Հալեպում, Բեյրութում, Կահիրեում գործում էին հայկական որբանոցներ և դպրոցներ, օրինակ Բերբերյանը՝ Կահիրեում, Հայ Ավետարանչական քոլեջը՝ Բեյրութում և Կիլիկյանը՝ Հալեպում [Дятлов, Мелконян, 2009, 54]:

Իր մեծությամբ և ազգային-հասարակական ակտիվ գործունեությամբ աչքի էր ընկնում ԱՄՆ-ի հայկականգաղթօջախը, որի կազմավորումը սկիզբ էր առնում դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներից: Ամերիկյան մայրցամաքի երեք հայկական գաղթավայրերում, 20-ական թվականների սկզբում ապրում էր 128 հազար հայ: Դրանցից 125 հազարը կենտրոնացած էր ԱՄՆ-ում և Կանադայում, իսկ շուրջ 3 հազարը՝ Լատինական Ամերիկայի մի քանի երկրներում՝ [Հայաստանի կոչնակ, 20.01.1923, 86] Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Մեքսիկայում, Կուբայում և այլուր: Կանադայի և Լատինական Ամերիկայի հայկական համայնքները բազմացան ու աշխուժացան հատկապես 1922 թվականից հետո, որպես հետևանք Միացյալ Նահանգների կողմից հայերի զանգվածային ներհոսման դեմ ընդունված օրենքի: Մերձավոր Արևելքից ու Եվրոպայից դեպի նոր աշխարհ ուղղված տարագիր հայերի քարավանները, իրենց առջև փակված գտնելով ԱՄՆ-ի դարպասները, շրջվում էին դեպի Կանադայի և Լատինական Ամերիկայի ափերը: Դեպի Լատինական Ամերիկա հայերի հոսանքն ուժեղացավ հատկապես Ֆրանսիայի կողմից Կիլիկան լքելուց հետո և այն քեմալականների տնօրինությանը հանձնելուց հետո: Կիլիկայում քեմալականների կազմակերպած ջարդերից փրկված մարաշցի, այնթապցի, հաճնցի ու զեյթունցի տարագիրները, որոնք ժամանակավոր ապաստան էին գտել Սիրիայի ու Լիբանանի գաղթականական կայաններում, զանգվածորեն ձգվում էին դեպի Ամերիկա: Նրանք էլ հենց, հաստատվելով Լատինական Ամերիկայի երկրներում, դարձան այդ շրջանի հայկական գաղթօջախների հիմնական կորիզը: Այդտեղ արագորեն աճում էր հայության թիվը նաև ի հաշիվ Բալկանների, Իրանի և Թուրքիայում մնացած հայության: Այդ մասին է խոսում այն փաստը, որ արդեն 1925 թվականին Լատինական Ամերիկայում հայության թիվը հասել էր 15 հազարի, իսկ Բուենոս Այրեսում դարձել էր գաղութահայ կյանքի կարևոր կենտրոններից մեկը: Ինչ խոսք, որ Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի մի քանի երկրներում հայության համար ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռավոր ամերիկյան աշխարհամաս մեկնող տարագիրները երբեք էլ այնտեղ չգտան ավելի նպաստավոր պայմաններ: Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Լատինական Ամերիկայում որոշ չափով ունևոր ու ինքնաբավ վիճակի հասած փոքրաթիվ ընտանիքների կողքին հսկայական զանգված էին կազմում ծայրահեղ թշվառության մեջ արվարձանային խղճուկ հյուղակներում իրենց գոյությունը հազիվ պահպանող հայտարագիրները: Չնայած հայության թվի անընդհատ ավելացմանը, այնուամենայնիվ, Լատինական Ամերիկայի երկրներում մեծ չափերի էր հասնում ապազգայնացումը, ուղղակի ձուլումը [Մելիքսեթյան, 1985, 51]:

Քսանական թվականներին, ըստ իրենց մեծության, հայության հոծ համախմբման տեսակետից, երրորդ տեղը գրավում էին Բալկանյան երկրների՝ բուլղարահայ, ռումինահայ և հունահայ գաղութները: Բուլղարիայում ապրում էր 46 հազար, Ռումինիայում (Տրանսիլվանիայի և Բեսարաբիայի հետ միասին)՝ 43 հազար, Հունաստանում և Կիպրոսում՝ 79 հազարհայ [Մելիքսեթյան, 1985, 51]:

1922 թվականի վերջերին կատարված հաշվարկումների համաձայն՝ արտասահմանյան մյուս երկրներում գաղութահայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Եգիպտոսում, Սուդանում և Եթովպիայում՝ 28 հազար, Հնդկաստանում, Ճավայում և Հեռավոր Արևելքի այլ երկրներում՝ 12 հազար, Եվրոպայում (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հունգարիա, Ավստրիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Բելգիա, Հոլանդիանն)՝ 38 հազար [Մելիքսեթյան, 1985, 52]: 1920-ական թթ. Սկզբին Իրաքում ապաստան է գտել շուրջ 30 հազար հայ գաղթական: Ավելի ուշ, նրանց մի մասը հեռացել է երկրից, մի մասն էլ՝ շուրջ 900 հոգի, 1947թ. ներգաղթել է Հայաստան [Վիրաբյան, 2018, 3]:

Առաջին աշխարհամարտն ու Արևմտյան Հայաստանում հայության ցեղասպանությունը, 1917թ. Փետրվարյան ռուսական հեղափոխությունն ու նրան հաջորդած քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի հայաշատ գաղթօջախները համալրեցին հայերի նոր զանգվածներով, որոնք անընդհատ տեղաշարժերի արդյունքում, աստիճանաբար ընդլայնեցին իրենց բնակության աշխարհագրությունը [Բարխուդարյան, Ալեքսանյան, 2015, 298, Զոհրաբյան, 2018, 151, Մինասյան, 2018, 397]:

1920թ. օգոստոսի 28-ի համառուսաստանյան ժողովրդագրական մարդահամարի վիճակագրական արդյունքերով, որոնք ստացվելեն 44 նահանգներից (ընդամենը 48-ն էին), հայ ազգաբնակչություն առկա էր նահանգներից 41-ում: Մարդահամարի արդյունքում Ռուսաստանում (առանց ինքնավար միավորների) արձանագրվել է 137.119 հայ: Հյուսիսկովկասյան երկրամասի Կուբան-Չերնոմորիեի, Թերեքի, Ստավրոպոլի և Դոնի հայ ազգաբնակչությունը միասին կազմում էր 129.126 մարդ: Ավելի ընդգրկուն ու համընդհանուր պատկեր է ներկայացնում 1926թ. մարդահամարը, ըստ որի ՌԽՖՍՀ-ում արձանագրվել է 195.410 հայ ազգի բնակիչները՝ գլխավորապես կենտրոնացած Դոնի, Չերնոմորիեի, Թերեքի, Կուբանի, Արմավիրի, Մայկոպի և Ստավրոպոլի օկրուգներում [Նուշերվանյան, 2017, 272]:

Շարունակաբար ստվարանում էր նաև եվրոպական երկրների հայությունը: Օրինակ՝ արդեն 1925 թվականին միայն Ֆրանսիայում հայերի թիվը հասել էր մոտ 45 հազարի: Ընդհանրապես ֆրանսահայ համայնքը, Մերձավոր Արևելքի և ԱՄՆ-ի գաղթօջախներից հետո, ամենամեծ հայկական գաղթօջախը եղավ արտասահմանում:

Իհարկե, այս թվերը միայն մոտավոր գաղափար կարող են տալ սփյուռքահայության թվի վերաբերյալ, քանի որ եղած աղբյուրները միանգամայն տարբեր տվյալներ են ներկայացնում: Դրա կարևոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն: Աննպաստ պայմանների հետևանքով հայությունը շատ երկրներում չէր կարողանում մնալ միևնույն տեղում, այլ վարում էր թափառական կյանք և հնարավոր չէր լինում որոշել նրա իրական թիվը [Ղանալանյան, 2016, 5]: Այնուհետև, տարբեր երկրներում գաղթականության հաշվառումը միանգամայն տարբեր սկզբունքներով էր կատարվում և անհնարին էր ստույգ տվյալներ ձեռք բերել: Օրինակ, ԱՄՆ մեկնածների ազգային հատկանիշը որոշվում էր ներգաղթի վարչության գրանցումներով, իսկ երկրի ներսում հետագայում կատարված աճը չէր ավելացվում կոնկրետ ազգության թվին: Այնտեղ ծնվածներն ըստ ամերիկյան վիճակագրության պարզապես համարվում էին ԱՄՆ-ի քաղաքացիներ և ոչ այս կամ այն ազգի ներկայացուցիչներ: Նույնն էր դրությունը նաև Ֆրանսիայում և մի շարք ուրիշ երկրներում: Ահա թե ինչու այդ տարիներին գաղութահայության

թիվը զանազան աղբյուրներում տատանվում էր 600 հազարից մինչև մեկ միլիոն [Մելիքսեթյան, 1985, 53]:

Չնայած սփյուռքահայությունն իրենից ներկայացնում էր այդքան ստվարաթիվ զանգված, այնուամենայնիվ, նրա գլխին սպառնալից կախված էր ուծացման վտանգը, որովհետև նա կտրված էր հարազատ երկրից, ցրված տարբեր վայրերում և ենթակա ամեն տեսակ ազդեցությունների: Ապազգայնացման ու ձուլման գործընթացը մեծապես պայմանավորված էր այնպիսի գործոններով, ինչպես հյուրընկալող երկրի տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակը, տիրող քաղաքական մթնոլորտը, գաղթօջախի ներսում սեփական մտավորական ուժերի պակասությունը, կրթական ու մշակութային օջախների բացակայությունը և այլն: Սփյուռքում հայապահպանման հիմնական և կարևոր գործոններից մեկը գաղթօջախների և մայր երկրի փոխադարձ կապերի ամրությունն ու շփումների հաճախականությունն է:

Ապազգայնացման ու օտարացման ամենից ավելի ենթակա էր հայությունը Ամերիկայում, Բալկաններում, Ֆրանսիայում և եվրոպական մյուս երկրներում: Այդ գաղթօջախներում մի շարք պատճառներով նոր սերունդը հեշտությամբ մոռանում էր իր մայրենին, իր ժողովրդի պատմությունը, մշակույթը, արագորեն խորթանում հայությունից և կորցնում իր ազգային դիմագիծը: Ապազգայնացման վտանգի դեմ սփյուռքահայության դիմագրավման համար հսկայական ու վճռական նշանակություն ունեցավ Խորհրդային Հայաստանի ստեղծում: Վերջինիս նկատմամբ Սփյուռքում թեև կային որոշակի վերապահումներ, հատկապես դաշնակցական շրջանակների կողմից, սակայն Խորհրդային Հայաստանի գոյության փաստը ինքնին օտարության մեջ դեգերող տարագիր հայությանը տվեց հայրենի պետություն ունենալու ընկալում և հավատ՝ ապագային կատմամբ [Մելիքսեթյան, 1985, 54]:

1920-ական թվականների հայկական Սփյուռքը պատկերացնելու տեսանկյունից տեղին ենք համարում մեջբերել «Հայրենիք» ամսագրի 1925թ. դեկտեմբերի համարում 1920-ական թթ. համայնքային կյանքի հետևյալ բնութագիրը:

- Այս ժամանակահատվածում համայնքային կյանքը կազմակերպված չէ, չունի ազգային հավաքական զարգացած կյանք, և մեծ ռեսուրսներ է վատնում ներքին պայքարներում:
- Այս հանգամանքին առանձնապես մեծ թափ է հաղորդում կուսակցական թշնամանքը, որը երբեմն ծայրահեղ մակարդակի է հասնում:
- Կուսակցությունները բաժանված են երկու մասի. Մի կողմը ռամկավարներն և հնչակյաններն բոլշևիկների բաց կամ քողարկված աջակցությամբ, մյուս կողմը՝ դաշնակցությունն ու համակիր չեզոք զանգվածները:
- Գաղափարական ազդեցության գերակշռությունը գաղութներում ամենուրեք ՀՅԴ-ի կողմն է, որի նշանախոսները և գործելակերպը վայելում է ընդհանուր հավանություն:
- Համայնքների տնտեսական վիճակը թույլ է:
- Ակներև է օտարացումը գաղութահայության շրջանում:
- Շատ բուռն են գաղութահայոց զգացումունքները Հայաստանի նկատմամբ, և նույնիսկ բոլշևիկյան ռեժիմի դաժանությունները չեն թուլացնում նրանց ձգտումը որևէ կերպով կապվելու Մայր հայրենիքին:

• Սակայն, բոլշևիկյան վարչակազմը աշխատում է գաղութահայությանը հեռու պահել Հայաստանից:

• Բոլոր պարագաներում, և՛ Հայաստանի, և՛ գաղութահայության շահերի տեսանկյունից, երկու կողմերի մերձեցումը հրատ ապանհրաժեշտություն է: Իսկ դրա համար հարկավոր է, որ օր առաջ Հայաստանի դռները բացվեն գաղութահայության առջև [Հայրենիք, 1925, 102]:

Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Հայոց ցեղասպանությունից հետո հարյուր հազարավոր հայեր համալրեցին արդեն իսկ գոյություն ունեցող հայկական գաղթավայրերը, որոնք ցեղասպանությունից հետո տրանսֆորմացվեցին՝ վերածվելով հայկական սփյուռքի: Այդ հարցում կարևոր դեր ունեցան սփյուռում գործող երեք ավանդական կուսակցությունները և նրանց հովանու ներքո գործող տարաբնույթ միություններն ու կազմակերպությունները:

Հայության ստվար զանգվածերը, որոնք ցեղասպանությունից հետո հաստատվել էին Ռուսաստանում, Բալկանյան երկրներում, Լատինական Ամերիկայում, ԱՄՆ-ում, Մերձավոր Արևելքում, շնորհիվ սփյուռքյան կազմակերպությունների, կառույցների և անհատների, ինչպես նաև ընդունող երկրների՝ ազգային փոքրամասնությունների հանդեպ քաղաքականության ու տրված արտոնությունների, կարողացան ձևավորել կայացած համայնքներ, պահպանել ազգային և էթնիկ առանձնահատկությունները՝ հավատքը, լեզուն, մշակույթը:

Գրականության ցանկ

Abrahamyan A., Hamarrot urvagits hay gaght'avayreri patmut'yan, Ye., 1964:

Abrahamyan L., Hayastany yev Haykakan sp'yurrk'y. Taranjatum yev handipum, 21-rd dar, 2006, t'iv 1 (11), ej 31-52:

Barkhudaryan V., Alek'sanyan H., Rrusastani hay gaght'ojakhneri patmut'yun, Ye., Patmut'yan institut, 2015:

Barseghyan A., TS'eghakron sharzhumy, Ye., 2009:

Dallak'yan K., Hay sp'yurrk'i patmut'yun (hamarrot aknark), Ye., 2004:

Yeghiazaryan A., Azgayin hamakets'akan mijavayreri dzevavorumy Haykakan «dasakan» yev «nor» sp'yurrk'um (Libanani yev RRD Haykakan hamaynk'neri orinakov), «Patmut'yun yev mshakuyt'», Ye., 2017, ej 50-66:

Yeghiazaryan A., Hay gaght'ashkharhi patmut'yan parberats'man p'vordz, «Sp'yurrk'agitut'yun» taregirk', Ye., YePHhrat., 2013, ej 3-28:

Yeghiazaryan A., Hayastani arrajin Hanrapetut'yan ghekavarut'yan hastatumy Sp'yurrk'um. «Hogevor Hayastan»-i steghtsumy (hayets'akargayin vorosh ditarkumner), «Hay gaght'akanut'yuny yev Hayrenik'-Sp'yurrk' kapery 1918-1985t't'.» mijazgayin gitazhoghovi zekuts'umner, Ye., 2011:

Yeghiazaryan A., Hay sp'yurrk'i patmut'yan parberats'umy, Hayagitut'yan harts'er, Ye., 2014, t'iv 2, ej 33-51:

Yeghiazaryan A., Ananyan M. yev aylk', Hayrenik'-sp'yurrk'haraberut'yunnery 1918 t'vakanits'minch'evmerorery, Ye., YePH hrat., 2017:

Zohrabyan E., Haykakan hamaynk'nery Rrusastani Dashnut'yunum.zargats'umner, mitumner, «Rrusastani Dashnut'yan haykakan sp'yurrk'y» zekuts'umneri zhoghovatsu, YePH hrat., 2018, ej150-161:

T'vorosyan T., Vardanyan A., Transformats'vogh sp'yurrk'neri hamematakan verlutsut'yan modelavorman khndirnery, «Haykakan k'aghak'agitakan handes», t'iv 2 (9), 2018, ej 5-32:

«Irak'ahay hamaynk'y 1915-1990 t't'.», yst arkhivayin p'astat'ght'eri: Khmb., Virabyan A., Irak'ahay hamaynk'y 1915-1990 t't'., Ye., 2018:

Hakobyan H., Sp'yurrk'agitut'yan ardi himnakhndirnery, «Banber Yerevani hamalsarani. Mijazgayin haraberut'yunner, k'aghak'agitut'yun», Ye., t'iv 3 (21), 2016, ej3-15:

«Hay sp'yurrk'» hanragitaran, Ye., 2003, ej 732:

«Hayastani koch'nak» shabat'at'ert', Niw York', t'iw 3, 20.01.1923:

«Hayrenik'» amsagir, Boston, 1925, t'iw 2:

Ghanalanyan T., Sp'yurrk'i nerk'in teghasharzhery 1950-1980-akan t'vakannerin, Ye., 2016:

Melik'set'yan H., Hayrenik'-sp'yurrk' arrnch'ut'yunnery yev hayrenadardzut'yuny (1920-1980t't'.), Ye., YePH hrat., 1985:

Minasyan E., RRD Haykakan sp'yurrk'i dery HH-RRD haraberut'yunnerum, «Rrusastani Dashnut'yan haykakan sp'yurrk'y» zekuts'umneri zhoghovatsu, YePH hrat., 2018, ej 397-406:

Nushervanyan N., Hay gaght'akanut'yan teghabashkhumy Hayots' ts'eghaspanut'yonits' heto, «Patmut'yun yev mshakuyt'», Ye., 2018, ej 271-282:

Poghosyan M., Haykakan sp'yurrk'i kazmavorman gortsynt'ats'y, History and Politics Academic Journal, Ye., t'iv 7, 2020, ej 26-40:

Vardanyan H., Gaght'akanut'yany veraberogh mi k'ani barreri yezrut'ayin arzhek'y hayerenum, Ye., YePH hrat., 2016, ej 124-128:

Vardanyan H., Sp'yurrk'i tipabanut'yuny yev Hay sp'yurrk'y, «Patmut'yun yev mshakuyt'», Ye., YePH hrat., t'iv 1, 2020, ej 202-208:

Tagesean A., Bnut'agrakan gitser, Libanani hayochakhin masin (p'vordzagitakan aknark), «Rrusastani Dashnut'yan haykakan sp'yurrk'y» zekuts'umneri zhoghovatsu, YePH hrat., 2018, ej 23-31:

Dyatlov V., Melkonyan E.,Armyanskaya Diaspora: ocherki sotsiokul'turnoy tipologii, Ye., 2009:

Cohen R., Global Diasporas: An Introduction. London, Routledge, 2008.